ԲԿ ՄԿԿ «ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2024թ. նոյեմբերի 1-ի №334 որոշմամբ

(լրացումներով առ 05.06.2026թ., որոշում №550)

ՌԵԿՏՈՐ Է.Մ. ՍԱՆԴՈՅԱՆ

«ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ (ՏԵՂԱՓՈԽՄԱՆ) ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Երևան – 2026

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ռուս-Հայկական համալսարան» Բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) ակադեմիական շարժունության /տեղափոխման/ կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) կարգավորում է ուսանողների տեղափոխությունը Համալսարանի ներսում, Հայաստանի Հանրապետության այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ (այսուհետ՝ բուհեր) և հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններ (այսուհետ՝ ուսումնական հաստատություններ)՝ անկախ ուսուցման ձևից (առկա, հեռակա, հեռավար) տեղափոխվելը:

1.2. Սույն կանոնակարգի իրավական հիմք են հանդիսանում՝

1.2.1. ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 2004թ. դեկտեմբերի 14-ի թիվ ՀՕ- 62-Ն օրենքը,

1.2.2. «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու մասին 2011թ. օգոստոսի 8-ի թիվ 1240-Ն որոշումը:

2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ուսանողների շարժունությունը չի ավելացնում ուսման սահմանված ժամկետը:

2.2. Ուսումնական հաստատությունների սովորողների շարժունության իրականացման եղանակներից է գործընկեր ուսումնական հաստատություններ, ինչպես նաև, սովորողի անհատական նախաձեռնությամբ, նրանց ուղարկելը՝

2.2.1. կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրերի (երկու ավարտական փաստաթուղթ) շրջանակներում ուսանելու.

2.2.2. համատեղ աստիճանաշնորհման կրթական ծրագրերով (մեկ վկայականով) ուսանելու.

2.2.3. միջբուհական համագործակցության, այդ թվում՝ ակադեմիական փոխանակման ծրագրերի շրջանակներում ուսանելու.

2.2.4. վերապատրաստում (այդ թվում՝ լեզվական) անցնելու.

2.2.5. ուսումնական (հետազոտական, արտադրական) պրակտիկա անցնելու:

2.3. Հավակնորդների ընտրությունը կատարվում է մրցութային եղանակով՝ հաշվի առնելով նաև նրանց ակադեմիական առաջադիմությունը և ընդունող կողմի լեզվի (կամ օտար լեզվի) իմացությունը:

2.4. Շարժունության ծրագրին մասնակցելու նպատակով՝ սովորողի և ուղարկող ու ընդունող ուսումնական հաստատությունների միջև կնքվում է եռակողմ կրթական համաձայնագիր: Համաձայնագրում նշվում են այն առարկաները, որոնք սովորողները պետք է ուսանեն ընդունող ուսումնական հաստատությունում: Միաժամանակ նշվում են ակադեմիական տարբերությունների մարման ժամկետների վերաբերյալ սովորողի պարտավորությունները:

2.5. Շարժունության արդյունքում կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքները չպետք է գերազանցեն համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության

բակալավրի կրթական ծրագրի 25 տոկոսը, մագիստրոսի կրթական ծրագրի 50 տոկոսը և հետազոտողի կրթական ծրագրի 30 տոկոսը:

2.6. Ընդունող բուհում ուսուցման ժամկետի ավարտից հետո ուսանողն իր ուսումնասիրած առարկաների և պարապմունքների ցանկը, ինչպես նաև ստացած կրեդիտներն ու գնահատականները հաստատող ակադեմիական տեղեկանքը պետք է ներկայացնի բուհ՝ ակադեմիական ճանաչման մասին փաստաթուղթը նախապատրաստելու համար:

3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Ընդհանուր դրույթներ

3.1.1. Տեղափոխության մասին ուսանողների դիմումներն ընդունվում են համապատասխան ձևով ուսուցման կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում: Ուսանողը տեղափոխման մասին դիմումը ներկայացնում է ռեկտորին՝ ակադեմիական տեղեկանք ստանալու համար: Համալսարանի կողմից ակադեմիական տեղեկանք տրամադրվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում:

3.1.2. Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է, եթե տեղափոխման պահին ուսումնառած կրթական ծրագրի և ընդունող կրթական ծրագրի բովանդակությունների տարբերությամբ պայմանավորված՝ առարկայական տարբերությունների թիվը չի գերազանցում 20 ECTS: Հակառակ պարագայում ուսանողին առաջարկվում է փոխադրվել ավելի ցածր կիսամյակում կամ այլ հարակից մասնագիտությամբ սովորելու, որի դեպքում առարկայական անհամապատասխանությունների նշված պահանջը բավարարվում է: Զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով բուհ ընդունված ուսանողների տեղափոխության դեպքում տրամադրված տարկետման իրավունքի փոփոխություն չի կատարվում:

3.1.3. Չի թույլատրվում բակալավրի կրթական ծրագրով առաջին և ավարտական կուրսերում ուսանողի տեղափոխությունը: Մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառողների տեղափոխությունը թույլատրվում է առաջին կիսամյակի ավարտից հետո: Համալսարանի հեռակա (առկա) բաժիններից առկա (հեռակա) բաժիններ տեղափոխումը թույլատրվում է առանց պարտադիր ժամկետային զինվորական ծառայության տարկետման իրավունքի, Համալսարանի կողմից սահմանված կարգով:

3.1.4. Չի թույլատրվում նպատակային տեղերում ընդունված ուսանողների տեղափոխումն այլ բուհ կամ այլ մասնագիտությամբ ուսումնառության:

3.1.5. Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է տվյալ մասնագիտության գծով լիցենզիայով հատկացված ընդունելության սահմանային տեղերի (ըստ ուսուցման ձևերի և որակավորման աստիճանների) շրջանակում:

3.1.6. Օտարերկրյա բուհերից ուսանողների տեղափոխության դեպքում հանձնման ենթակա ստուգարքների և քննությունների թվի մեջ չեն ներառվում հայագիտական առարկաները: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ սովորողն օտարերկրյա բուհում, որպես մասնագիտական,

ուսումնասիրել է հայագիտական առարկաներ, ինչպես նաև Համալսարանում ընտրել է հայագիտական մասնագիտություններ:

3.1.7. Կրեդիտներով պայմանավորված առարկայական տարբերությունների ցանկը որոշում է ընդունող բուհը: Ուսանողը պետք է ուսումնառի և հանձնի գոյացած տարբերությունները՝ ընդունող բուհի կողմից սահմանված անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

3.1.8. Չի թույլատրվում ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր չունեցող ոչ պետական բուհերից ուսանողի տեղափոխությունը Համալսարան:

3.2. Ներբուհական տեղափոխություններ

3.2.1. Ուսանողի՝ Համալսարանի ներսում տեղափոխությունը, որի ընթացքում կարող է անցում կատարվել մեկ մասնագիտությունից մյուսը կամ փոխվել ուսուցման ձևը (առկա, հեռակա), իրականացվում է Համալսարանի ռեկտորի հրամանով, ուսանողի անձնական դիմումի համաձայն:

3.2.2. Ներբուհական տեղափոխությունները կատարվում են սույն կարգով սահմանված՝ 3.1 կետում սահմանված պահանջներին համապատասխան:

3.3. Հայաստանի Հանրապետության բուհից համալսարան տեղափոխությունները

3.3.1. Ուսանողի՝ բուհից Համալսարան տեղափոխությունը, որի ընթացքում կարող է անցում կատարվել նույն մասնագիտությամբ, մեկ մասնագիտությունից մյուսը կամ փոխվել ուսուցման ձևը (առկա, հեռակա), իրականացվում է Համալսարանի ռեկտորին հասցեագրված՝ ուսանողի անձնական դիմումի համաձայն, որին կցվում է նաև սովորած բուհի կողմից տրամադրված ակադեմիական տեղեկանքը:

3.3.2. Եթե Համալսարանում տվյալ մասնագիտությամբ և կուրսում ազատ տեղերի թիվն ավելի քիչ է, քան տեղափոխվել ցանկացողների թիվը, ապա կազմակերպվում է ատեստավորում, և անցկացվում է մրցույթ, որի արդյունքում ընտրվում են այն ուսանողները, ովքեր շարունակելու են ուսումնառությունը: Ատեստավորման և մրցույթի անցկացման կարգն ու պայմանները սահմանում է Համալսարանը:

3.3.3. Հիմք ընդունելով ուսանողի դիմումը.

3.3.3.1. Համալսարանի ուսումնական գործընթացի կազմակերպման վարչությունը (այսուհետ՝ ՈՒԳԿՎ) սույն կանոնակարգին համապատասխան տեղափոխման դիմում ներկայացնելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում գնահատում է ստացված փաստաթղթերը՝ սովորողի՝ սույն կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

3.3.3.2. Համալսարանի ինստիտուտները (այսուհետ՝ Ինստիտուտներ) 2 աշխատանքային օրվա ընթացքում որոշում են տեղափոխման հնարավորությունը (ուսումնական առարկաների, պրակտիկաների, գիտական հետազոտությունների ցանկը, որոնք սովորողի տեղափոխման դեպքում կվերահաշվարկվեն

կամ կվերաթեստավորվեն Համալսարանի կողմից սահմանված կարգով, ինչպես նաև ակադեմիական տարբերությունների թույլատրելի քանակը);

3.3.3.3. Ակադեմիական տարբերության ծավալից ելնելով՝ ուսանողին կարող է առաջարկվել է փոխադրվել ավելի ցածր կիսամյակում կամ այլ հարակից մասնագիտությամբ սովորելու, որի դեպքում առարկայական անհամապատասխանությունների նշված պահանջը բավարարվում է:

3.3.3.4. ՈւԳԿՎ-ն՝ ատեստավորման շրջանակներում, 5 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է մասնագիտական հարցազրույց Ինստիտուտի տնօրենի հետ;

3.3.4. Տեղափոխման մասին որոշում կայացնելիս ՈւԳԿՎ-ն տեղափոխման մասին որոշման ընդունման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում ուսանողին տրամադրում է տեղափոխման մասին տեղեկանք, որում նշվում են բարձրագույն կրթության մակարդակը, դասիչը և կրթական ծրագրի անվանումը: Տեղափոխման մասին տեղեկանքը ստորագրում է համապատասխան լիազորություններով օժտված անձը և վավերացվում կնիքով:

3.3.5. Սովորողը պարտավոր է 6 աշխատանքային օրվա ընթացքում Համալսարան ներկայացնել իր բուհի կողմից հաստատված՝ տեղափոխման հիմքով հեռացման հրամանի քաղվածքը և նախորդ կրթության մասին փաստաթուղթը (նշված փաստաթղթի բնօրինակը կամ սահմանված կարգով հաստատված դրա պատճենը):

3.3.6. Համալսարանը սույն կանոնակարգի 3.3.6. կետում նշված փաստաթղթերի ներկայացման օրվանից 3-5 աշխատանքային օրվա ընթացքում արձակում է հրաման՝ տվյալ ուսանողի տեղափոխման հիմքով Համալսարան ընդունելու մասին:

3.3.7. Վճարովի կրթական ծառայությունների մատուցման պայմանագրի ստորագրումն ու կնքումն իրականացվում է սույն կանոնակարգի 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ 3.3.6. կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

3.3.8. Տեղափոխման կարգով ընդունման հրամանի հրապարակումից հետո ՈւԳԿՎ-ն ձևավորում է սովորողի անձնական գործը, որում մուտքագրվում են նաև տեղափոխման մասին դիմումը, ուսումնառության ժամանակահատվածի մասին տեղեկանքը, սովորողի կրթական նվաճումները հաստատող այլ փաստաթղթեր (առկայության դեպքում), նախորդ կրթության մասին փաստաթուղթը (բնօրինակը կամ պատճենը), տեղափոխման հիմքով հեռացման հրամանի քաղվածքը, տեղափոխման հիմքով ընդունման հրամանի քաղվածքը, ինչպես նաև վճարովի կրթական ծառայությունների մատուցման պայմանագիրը, եթե ընդունումն իրականացվում է կրթական ծառայությունների պայմանագրերով ուսուցման համար՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց միջոցների հաշվին:

3.3.9. Տեղափոխման հիմքով ընդունման մասին հրամանի հրապարակման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսանողներին տրվում է ուսանողական տոմս և ստուգարքային գրքույկ:

3.4. Օտարերկրյա բուհերից համալսարան տեղափոխությունները

3.4.1. Օտարերկրյա պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններից Համալսարան ուսանողների տեղափոխությունն իրականացվում է վճարովի ուսուցման սկզբունքով: Օտարերկրյա բուհ միջպետական համաձայնագրերով ուսման գործուղված և առողջական վիճակի կամ ուսման գործընթացը խոչընդոտող այլ անհաղթահարելի հանգամանքների պատճառով Հայաստանի Հանրապետություն վերադարձող ուսանողները, Համալսարանի ռեկտորի առաջարկությամբ և նախարարության համաձայնությամբ, ուսուցումը կարող են շարունակել անվճար սկզբունքով:

3.4.2. Համալսարանը, դրական կարծիքի դեպքում, նախարարություն է ներկայացնում ուսանողի ակադեմիական տեղեկանքը: Տեղափոխության մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը՝ համապատասխան օտարերկրյա բուհից գրավոր հարցման դրական պատասխան ստանալուց հետո:

3.4.3. Ուսանողի տեղափոխությունն իրականացվում է սույն կարգի 3.1-3.3-կետերով սահմանված դրույթներին համապատասխան: Եթե ուսանողի անձնական գործն առաքման ենթակա չէ, ապա դրա մասին Համալսարանին հղվում է համապատասխան փաստաթուղթ, իսկ ուսանողի հրամանագրումը կատարվում է նրա դիմումի և ակադեմիական տեղեկանքի հիման վրա: